KAISER PERMANENTE

Բժշկական ֆինանսական օգնության քաղաքականության ամփոփագիր

Kaiser Permanente-ի Բժշկական ֆինանսական օգնության (Medical Financial Assistance, MFA) ծրագիրը ֆինանսական օգնություն է տրամադրում որակավորվող հիվանդներին, որոնց օգնություն է հարկավոր շտապ օգնության կամ բժշկական տեսակետից անհրաժեշտ խնամքի համար, որը նրանք ստանում են Kaiser Permanente հիմնարկությունում կամ Kaiser Permanente մատակարարի կողմից: Հիվանդները կարող են դիմել MFA ծրագրի համար մի քանի եղանակով, ներառյալ՝ անձամբ, հեռախոսով կամ լրացնելով ու ուղարկելով թղթե դիմում: Հիվանդները պետք է համապատասխանեն ներքևում նշված իրավասության պահանջներին, որպեսզի որակավորվեն:

Ո՞վ է իրավասու Ֆինանսական օգնության համար և որո՞նք են պահանջները:
Ծրագիրն օգնում է ցածր եկամուտ ունեցող, ապահովագրություն չունեցող կամ քիչ ծառայություններ ստացող հիվանդներին, ում օգնություն է հարկավոր ամբողջությամբ կամ մասամբ իրենց բժշկական խնամքի համար վճարելու հարցում: Ընդհանրապես, հիվանդներն իրավասու են Ֆինանսական օգնության համար, երբ նրանց Համախառն ընտանեկան եկամուտը կազմում է կամ ցածր է Դաշնային աղքատության ուղենիշների (Federal Poverty Guidelines, FPG) 350%-ից, կամ եթե նրանք ունեն անսովոր բարձր բժշկական ծախսեր: Հիվանդները պետք է խորհրդակցեն Ֆինանսական խորհրդատուի հետ՝ իրենց իրավասությունը որոշելու և դիմելու օգնության համար:

Այն հիվանդներից, որոնք իրավասու են բժշկական ֆինանսական օգնության համար, չի գանձվելու ավելի քան սովորաբար գանձվող գումարները (amounts generally billed, AGB) շտապ օգնության կամ բժշկական տեսակետից անհրաժեշտ այլ խնամքի համար: Տես՝ kp.org/mfa/scal *կայքը AGB-ի մասին տվյալների համար:*

Արդո՞յք Kaiser Permanente-ը զննում է հիվանդներին հանրային ու մասնավոր ծրագրի իրավասության համար:
Kaiser Permanente-ը հիվանդներին օգնություն է տրամադրում՝ գտնելու հնարավոր հանրային ու մասնավոր առողջապահական ապահովագրման ծրագրեր, որոնք կարող են աջակցել առողջապահական խնամք ստանալու կարիքներին: Հիվանդը, ով իրավասու է համարվում հանրային ու մասնավոր առողջապահական ապահովագրման ծրագրի համար, պետք է դիմի այդ ծրագրերի համար:

Ի՞նչ է ապահովագրում այս ծրագիրը:
Բժշկական ֆինանսական օգնության ծրագիրն ապահովագրում է բժշկական տեսակետից անհրաժեշտ խնամքը, որը տրամադրվել է Kaiser Permanente բժշկական գրասենյակում, հիվանդանոցում կամ դեղատանը, կամ տրամադրվել է Kaiser Permanente մատակարարի կողմից: Չապահովագրվող ծառայությունների տեսակներից են նրանք, որոնք Kaiser Permanente մատակարարը չի համարում արտակարգ իրավիճակ կամ բժշկական տեսակետից անհրաժեշտ, անպտղության բուժումներ և փոխնակ մայրության ծառայություններ, ինչպես նաև առողջապահական խնամքի ապահովագներ: Խնդրում ենք կարդալ ամբողջական ցանկը MFA քաղաքականության փաստաթղթում:

Կա արդյո՞ք լեզվական օգնություն:
Ձեզ համար մատչելի են անվճար բանավոր թարգմանիչներ: Բժշկական ֆինանսական օգնության դիմումը, քաղաքականությունն ու այս քաղաքականության ամփոփագիրը կարող են մատչելի լինել ձեր լեզվով: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք 1-800-464-4000 հեռախոսահամարով կամ այցելեք մեր կայքը՝ kp.org/mfa/scal:

Արդյո՞ք Kaiser Permanente-ն ունի Ֆինանսական օգնության քաղաքականություն:
Դուք կարող եք խնդրել Kaiser Permanente-ի Բժշկական ֆինանսական օգնության քաղաքականության անվճար պատճենը՝ զանգահարելով 1-800-390-3507 հեռախոսահամարով, նամակ գրելով P.O. Box 7086, Pasadena, CA 91109-7086, կամ այցելելով մեր կայքը՝ kp.org/mfa/scal:

©2018 Kaiser Foundation Hospital;
Kaiser Foundation Health Plan, Inc.

Օգնության կարիք ունե՞ք:
Բժշկական ֆինանսական օգնության դիմելու գործընթացի մասին օգնության կամ հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել 1-800-390-3507 հեռախոսահամարով կամ զրուցել Ֆինանսական խորհրդատուի հետ Ընդունելության բաժանմունքից՝ Kaiser Permanente ցանցակած հիվանդանոցում:

Ինչպե՞ս պետք է դիմեմ:
Դուք կարող եք դիմել բժշկական ֆինանսական օգնության համար մի քանի եղանակով՝ խնդրելով ծրագրի մասին տեղեկություններ անձամբ կամ հեռախոսով, կամ խնդրելով թղթե դիմում հետևյալ աղբյուրներից որևէ մեկից.

- Ֆինանսական խորհրդատուից Ընդունելության կամ Շտապ օգնության բաժանմունքից՝ Kaiser Permanente ցանցակած հիվանդանոցում
- Զանգահարելով 800-390-3507 հեռախոսահամարով
- Փոստով (անվճար)՝ P.O. Box 7086, Pasadena, CA 91109-7086
- Ներբեռնելով դիմումը Kaiser Permanente Community կայքից՝ kp.org/mfa/scal:

Խնդրում ենք ուղարկել լրացված դիմումները (ներառյալ՝ բոլոր պահանջվող փաստաթղթերն ու տեղեկությունները, որոնք նշված են դիմումի ցուցումներում) մոտակա Kaiser Permanente հիվանդանոցի ընդունարան կամ շտապ օգնության բաժին, կամ փոստով ուղարկել դիմումը հետևյալ հասցեով՝ MFA Program, P.O. Box 7086, Pasadena, CA 91109-7086:

Kaiser Permanente-ը կդիտարկի ներկայացված դիմումները, երբ դրանք ամբողջությամբ լրացված են, և կորոշի՝ արդյոք դուք իրավասու եք՝ ըստ Kaiser Permanente Բժշկական ֆինանսական օգնության քաղաքականության (Medical Financial Assistance Policy): Կիսատ դիմումները կարող են հետաձգել մշակումը կամ դառնալ ձեր MFA դիմումի մերժման պատճառ, սակայն Kaiser Permanente-ը կտեղեկացնի դիմորդներին ու նրանց հնարավորություն կտա ուղարկել պակասող փաստաթղթերը կամ տեղեկությունները մինչև պահանջվող վերջնաժամկետը:

©2018 Kaiser Foundation Hospital;
Kaiser Foundation Health Plan, Inc.